ՁԵ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 41

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-003-0111-0002 կադաստրային ծածկագրով 0.04 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հասարակական կառուցապատման հողեր (ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի)	11-003-0111-0002 կադաստրային ծածկագրով 0.04 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից տրամադրված պայմանը՝ «Ուսումնասիրության արդյունքում տեղեկացնում ենք, որ ՀՀ ք. Դիլիջան Կալինինի փողոց թիվ 253 հասցեում առկա է Ընկերությանը պատկանող FO 4 տիպի բաժանորդային մալուխ: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ խնդրում ենք տվյալ հողամասի նպատակային նշանակության փոփոխության ժամանակ Ձեր իրավասությունների սահմաններում ապահովել կամ օժանդակել Ընկերությանը պատկանող ենթակառուցվածքների հետագա շահագործման անխոչընդոտ իրականացումը: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությանը պատկանող մալուխների տեղակայման վերաբերյալ տեղեկատվությունը Ընկերությունը համարում է երրորդ անձանց անհայտ լինելու ուժով առևտրային արժեք ունեցող տեղեկատվություն, խնդրում ենք այն օգտագործել բացառապես հարցմամբ նախատեսված նպատակներով:

4. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 28 » «փետրվարի» 2022թ.